

ԵՐԵՎԱՆԻ ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՁԻ  
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԹԵՍՏԻ ՆՄՈՒՇ / 12-ի բազա/

1.Ո՞րն է էրիթրոցիտների հիմնական գործառույթը.

- 1/ մասնակցում են թթվածնի և ածխաթթու գազի փոխադրմանը
- 2/ օրգանիզմը պաշտպանում են օտարածին սպիտակուցներից
- 3/ մասնակցում են արյան մակարդմանը
- 4/ օրգանիզմը պաշտպանում են մանրէներից

2.Հասուն մարդու օրգանիզմում n<sup>o</sup>ր գեղձի թերգործառույթն է առաջացնում այտուցվածություն,

անտարբերություն միջավայրի նկատմամբ, հիշողության վատացում.

- 1/ վահանաձև գեղձ
- 2/ մակերիկամ
- 3/ ենթաստամոքսային գեղձ
- 4/ լյարդ

3.Ո՞ր շարքում է ճիշտ նշված մարդու օդատար ուղիների հաջորդականությունը.

- 1/ քթի խոռոչ, շնչափող, քթըմպան, կոկորդ, բրոնխներ
- 2/ քթի խոռոչ, քթըմպան, կոկորդ, շնչափող, բրոնխներ
- 3/ քթըմպան, քթի խոռոչ, շնչափող, կոկորդ, բրոնխներ
- 4/ քթի խոռոչ, կոկորդ, քթըմպան, շնչափող, բրոնխներ

4. Ո՞ր վիտամինի անբավարարության դեպքում է թուլանում օրգանիզմի դիմադրողականությունը,

դանդաղում աճը, զարգանում են մաշկային հիվանդություններ և մթնշաղին խիստ վատանում է

տեսողությունը.

1/ A

2/ C

3/ D

4/ B<sub>1</sub>

5. Մարդու ո՞ր հիվանդությունն է զարգանում երբ մարդու քրոմոսոմների հավաքակազմում

ավելորդ քրոմոսոմ է հայտնվում/ 21-րդ գույգում/.

1/ դալտոնիզմ

2/ Դաունի համախտանիշ

3/ հեմոֆիլիա

4/ հիպերտրիխոզ

6. Ո՞ր օրգանիզմներն են հետերոտրոֆ.

1/ ծածկասերմ բույսերը

2/ սնկերը և կենդանիները

3/ կապտականաչ ջրիմուռները

4/ քեմոսինթեզող բակտերիաները

7. Ո՞րն է ռիբոսոմի գործառույթը.

- 1/ ԱԵՖ-ի սինթեզը
- 2/ նյութերի փոխադրումը
- 3/ ֆոտոսինթեզը
- 4/ սպիտակուցի սինթեզը

8. Ի՞նչն է բնորոշ ոչ պայմանական ռեֆլեքսներին.

- 1/ բնածին են
- 2/ չեն փոխանցվում ժառանգաբար
- 3/ անհատական են
- 4/ առաջանում են կյանքի ընթացքում

9. Ո՞ր մկանները չեն մասնակցում շնչառության գործընթացին.

- 1/ որովայնի
- 2/ ստոծանու
- 3/ միջկողային
- 4/ կերակրափողի

10. Մարդու ո՞ր հիվանդությունն է պայմանավորված ներզատական

գեղձի թերգործառույթով.

- 1/ լորձայտուցը
- 2/ բազեդովյանը
- 3/ ակրոմեգալիան
- 4/ գիգանտիզմը

11.Բջջային ո՞ր կառույցի ֆունկցիաներից է սպիտակուցների, ածխաջրերի,

լիպիդների մոլեկուլների կուտակումն ու փաթեթավորումը.

1/ բջջային կենտրոնի

2/ Գոլջիի համալիրի

3/ռիբոսոմների

4/ կորիզակի

12.Ո՞րն է տեսակի պարզագույն կառուցվածքը.

1/ պոպուլյացիան

2/ դասը

3/ կարգը

4/ տիպը

13.Բերված էկոլոգիական գործոններից ո՞րն է կենսածին.

1/ քամին

2/ մակաբույսությունը

3/ խոնավությունը

4/ հողի աղայնությունը

14.Ո՞րն է իդեոադապտացիայի օրինակ.

1/ տաքարյունության առաջացումը

2/ փղի կնճիթի առաջացումը

3/ ոզնաշարի առաջացումը

4/քորդայի առաջացումը

15.Ո՞րն է կոնսումենտ.

1/ քեմոսինթեզող բակտերիան

2/ կապտականաչ ջրիմուռը

3/ մակաբույծ որդը

4/կանաչ բույսը

16.Ե՞րբ են ռեցեսիվ մուտացիաներն արտահայտվում ֆենոտիպորեն.

1/ մշտապես

2/ հիմնականում հոմոզիգոտ վիճակում

3/ միայն հետերոզիգոտ վիճակում

4/ չեն արտահայտվում

17.Ի՞նչ գամետներ են առաջացնում Aabb գենոտիպով առանձնյակները.

1/ Ab, ab

2/ Aa, bb

3/ aB, AB

4/ AB, Ab

18. Ումի՞ց կարող են տղաները ժառանգել հեմոֆիլիայի գենը.

1/ առողջ հորից

2/ առողջ մորից

3/ հիվանդ հորից

4/ պապիկից

19.Ի՞նչ է տեղի ունենում միտոզի անաֆազում.

1/ քրոմոսոմներն ապապարուրվում են և հաստանում

2/ ցենտրիոլները տարամիտվում են բջջի հակադիր բևեռներ

3/ քրոմոսոմները դասավորվում են իլիկի հասարակածային հարթության վրա

4/ քրոմոսոմները տարամիտվում են դեպի բջջի բևեռներ

20.Ո՞րն է անսեռ բազմացման եղանակ.

1/ պարթենոգենեզը

2/ բազմացումը սպորների միջոցով

3/կոնյուգացիան

4/ բազմացումը բեղմնավորման միջոցով

21.Ինչերի՞ց է կազմված քրոմատինը.

1/ ՌՆԹ-ից և ածխաջրից

2/ ՌՆԹ-ից և լիպիդից

3/ԴՆԹ-ից և սպիտակուցից

4/ ԴՆԹ-ից և ածխաջրից

22.Ո՞ր գործառույթը չի իրականացնում ընկալիչը.

1/ արտաքին միջավայրից ազդակի ընդունումը

2/ գրգիռի վերափոխումը նյարդային ազդակի

3/ նյարդային գրգիռի հաղորդումը նյարդային կենտրոնից

4/ ներքին միջավայրից գրգիռների ընդունումը

23.Մարդու ոսկորներից որո՞նք ոտնաթաթի ոսկորներ չեն.

1/ գարշապարի ոսկրերը

2/ նախագարշապարի ոսկրերը

3/ մատնոսկրերը

4/ոլոքները

24.Ո՞րը մարդու օդատար ուղիներից չէ.

1/ քթի խոռոչը

2/ բրոնխները

3/թոքերը

4/քթըմպանը

25.Ի՞նչ նյութեր չեն պարունակվում առողջ մարդու երկրորդային մեզում.

1/ միզաթթու , միզանյութ

2/ գլյուկոզ, հորմոններ, հակամարմիններ

3/ հանքային աղեր, նյութափոխանակության վնասակար արգասիքներ

4/ ջրում լուծված վնասակար նյութեր

26.Ո՞ր ածխաջուրն է հանդիսանում պոլիմեր.

1/ գալակտոզը

2/ գլիկոզենը

3/ էրիթրոզը

4/ քսիլոզը

27.Ի՞նչ է տեղի ունենում կորիզակում.

1/ լիպիդների կենսասինթեզ

2/ԱԵՖ-ի կենսասինթեզ

3/լիզոսոմների ձևավորում

4/ռիբոսոմների ձևավորում

28.Որտե՞ղ է տեղի ունենում տեսողական զգայնության վերջնական ձևավորումը.

1/ անոթաթաղանթում

2/ ապակենման մարմնում

3/ ակնագնդի լուսաթափանցիկ եղջերաթաղանթում

4/ մեծ կիսագնդերի կեղևի տեսողական բլթում

29.Ե՞րբ է հաճախանում մարդու սրտի աշխատանքը.

1/ պարասիմպաթիկ բաժնի գրգռման դեպքում

2/ սիմպաթիկ բաժնի գրգռման դեպքում

3/ ն՛ սիմպաթիկ, ն՛ պարասիմպաթիկ բաժինների գրգռման դեպքում.

4/ կամ սիմպաթիկ, կամ պարասիմպաթիկ բաժինների գրգռման դեպքում

30.Ո՞ր էպիթելն է սկիզբ առնում էկտոդերմից սաղմնային զարգացման ընթացքում.

1/ աղիների

2/ թոքերի



3/ մաշկի

4/ խոիկների

31. Որո՞նք են ալելային գեները.

1/ տարբեր քրոմոսոմներում հաջորդաբար դասավորված գեները

2/ հոմոլոգ քրոմոսոմների տարբեր լոկուսներում դասավորված գեները

3/ տարբեր օրգանիզմներում հատկանիշի արտահայտումը վերահսկող գեները

4/ հոմոլոգ քրոմոսոմների միևնույն լոկուսում դասավորված և միևնույն

հատկանիշի զարգացումը պայմանավորող գեները

32. Սովորաբար ի՞նչ հարաբերությամբ է կենդանիների օրգանիզմում տեղի ունենում

ճեղքավորում ըստ սեռի.

1/ 1: 1

2/ 3 : 1

3/ 1 : 2 : 1

4/ 2: 1

33. Ու՞մ կողմից է ձևակերպվել գամետների մաքրության օրենքը.

1/Թ. Մորգանի

2/ Գ. Մենդելի

3/ 2. Դարվինի

4.Ժ.Բ.Լամարկի

34.Առավելագույնը քանի՞ տիպի գամետներ են առաջացնում երկհետերոզիգոտ առանձնյակները.

1/ 1

2/ 2

3/ 4

4/ 8

35.Ո՞ր մկաններն են առավել դանդաղ կծկվում.

1/ սրտի կմախքային մկանները

2/ ներքին օրգանների հարթ մկանները

3/ վերին վերջույթների կմախքային մկանները

4/ ստորին վերջույթների կմախքային մկանները

36.Ո՞ր պնդումն է ճիշտ մարդու բնական բնածին իմունիտետի վերաբերյալ.

1/ ձևավորվում է պատվաստումից հետո

2/ ձևավորվում է վարակիչ հիվանդություններով հիվանդանալուց հետո

3/ ժառանգվում է ծնողներից

4/ ձևավորվում է բուժիչ շիճուկ ներարկելիս

37. Ինչե՞րն են մտնում մարդու պերիֆերիկ նյարդային համակարգի մեջ.

- 1/ գլխուղեղը և ողնուղեղը
- 2/ ողնուղեղը, վեգետատիվ և մարմնական նյարդային համակարգերը
- 3/ գլխուղեղը, վեգետատիվ և մարմնական նյարդային համակարգերը
- 4/ նյարդերը, ընկալիչները, նյարդային հանգույցները

38. Ի՞նչ տեղի չի ունենում մարդու մաշկում միջավայրի ջերմաստիճանի բարձրացման դեպքում.

- 1/ մազանոթների լուսածերպերը լայնանում են
- 2/ նվազում է ջերմատվությունը
- 3/ մեծանում է մղվող արյան քանակը
- 4/ արագանում է արյան հոսքը դեպի մարմնի մակերես

39. Ո՞րն է մարդու երիկամի կառուցվածքային և գործառական միավորը.

- 1/ նեֆրոնը
- 2/ միգուկը
- 3/ միզապարկը
- 4/ միզաձորանը

40. Ի՞նչն է նպաստում արյան դանդաղ մակարդմանը.

- 1/ ցածր ջերմաստիճանը.
- 2/ վիտամին K-ի առկայությունը

3/  $Ca^{++}$  -ի մեծ խտությունը

4/ հեպարինի բացակայությունը

41. Որո՞նք են կոնսումենտները.

1/ կապտականաչ ջրիմուռները

2/ ավտոտրոֆ բակտերիաները

3/ ձկները և երկկենցաղները

4/ բոլոր բույսերը

42. Որո՞նք են պրոկարիոտները.

1/ ջրիմուռները և մամուռները

2/ նախակենդանիները և սնկերը

3/ քեմոսինթեզող բակտերիաները և բակտերիոֆագերը

4/ բակտերիաները և կապտականաչ ջրիմուռները

43. Ինչպիսի՞ բնույթ ունի բնական ընտրությունը.

1/ չուղղորդված

2/ ուղղորդված

3/ չուղղորդված և ուղղորդված

4/ ընտրության ընթացքում գոյատևում են ամենաուժեղները

44. Ի՞նչ բաղադրիչներից են կազմված էկոհամակարգերը.

1/ բիոտիկ և աբիոտիկ

2/ միայն աբիոտիկ

3/ միայն բիոտիկ

4/ կենսացենոզներից

45. Առանձնյակների ո՞ր խմբին են անվանում տեսակ.

- 1/ ընդհանուր տարածքում ապրող
- 2/ որոնք առաջացել են էվոլյուցիայի արդյունքում
- 3/ ազատ խաչասերվող և բեղուն սերունդ տվող
- 4/ միջավայրի որոշակի պայմաններում ապրող

46. Ինչի՞ արդյունքում է առաջանում համակցական փոփոխականությունը.

- 1/ սեռական բազմացման
- 2/ անսեռ բազմացման
- 3/ մոդիֆիկացիոն փոփոխականության
- 4/ շրջապատի միջավայրի փոփոխությունների

47. Ո՞րն է պլաստիկ փոխանակության գործընթացի օրինակ.

- 1/ սպիտակուցների քայքայումը
- 2/ ածխաջրերի օքսիդացումը
- 3/ ֆոտոսինթեզը
- 4/ գլիկոլիզը

48. Նուկլեինաթթուների մոնոմերներն են.

- 1/ ամինաթթուները
- 2/ նուկլեոտիդները
- 3/ ազոտական հիմքերը
- 4/ ֆոսֆորական թթվի մնացորդները

49.Ե՞րբ է տեղի ունենում ԴՆԹ-ի մոլեկուլների կրկնապատկումը.

- 1/ մետաֆազում
- 2/ պրոֆազում
- 3/ անաֆազում
- 4/ ինտերֆազում

50.Կենդանի օրգանիզմներում հանդիպող ամենախոշոր մոլեկուլները՝

- 1/ սպիտակուցներն են
- 2/ ՌՆԹ-ներն են
- 3/ ԴՆԹ-ներն են
- 4/ թաղանթանյութն է